ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ---------- 2022թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի
N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով, 53-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը. Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N 16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 10-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) Որոշման N 1 հավելվածի «II. Առանձնցված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի» գլուխների 1-ին կետերը լրացնել նոր «2.1)» ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«2.1) երեխաների և սոցիալական պաշտպանության բաժին»

2) ուժը կորցրած ճանաչել որոշման N 1 հավելվածի «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի», «Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի» գլուխների 1-ին կետերի 7-րդ ենթակետերը.

3) Որոշման N 2 հավելվածում՝

ա. ուժը կորցրած ճանաչել «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատակիցներ» գլխում շարադրված «Սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի» բաժինները

բ. «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարների աշխատակազմի աշխատակիցներ» գլխում շարադրված «Սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի» բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ.

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափը	հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձ
2.1	**Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ**				
-	**Երեխաների և սոցիալական պաշտպանության բաժին**				
1.	Բաժնի պետ	1	387,600		387,600

2.	Գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	3	289,000		867,000
3.	Գլխավոր մասնագետ-հոգեբան	1	289,000		289,000
4.	Առաջատար մասնագետ	1	282,200		282,200
5.	Առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
-	Ընդ.	7			2,097,800

բ.1. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.1. կետում «Ամբողջը» տողի «107» և «30,797,200» թվերը փոխարինել համապատասխանաբար «109» և «31,392,200» թվերով.

գ. «Երևանի Ավան վարչական շրջանի ղեկավարների աշխատակազմի աշխատակիցներ» գլխում շարադրված «Սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի» բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ.

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափը	հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձ
2.2	**Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ**				
-	**Երեխաների և սոցիալական պաշտպանության բաժին**				
1.	Բաժնի պետ	1	387,600		387,600
2.	Գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	1	289,000		289,000
3.	Գլխավոր մասնագետ-հոգեբան	1	289,000		289,000
4.	Առաջատար մասնագետ	1	282,200		282,200
5.	Առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
-	Ընդ.	5			1,519,800

գ.1. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.2. կետում «Ամբողջը» տողի «85» և «24,949,200» թվերը փոխարինել համապատասխանաբար «86» և «25,238,200» թվերով.

դ. «Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարների աշխատակազմի աշխատակիցներ» գլխում շարադրված «Սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի» բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ.

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափը	հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձ
2.3	**Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ**				
-	**Երեխաների և սոցիալական պաշտպանության բաժին**				
1.	Բաժնի պետ	1	387,600		387,600
2.	Գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	3	289,000		867,000
3.	Գլխավոր մասնագետ-հոգեբան	1	289,000		289,000
4.	Առաջատար մասնագետ	1	282,200		282,200
5.	Առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
-	Ընդ.	7			2,097,800

դ.1. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.3. կետում «Ամբողջը» տողի «150» և «42,551,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «151» և «42,846,800» թվերով.

ե. «Երևանի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարների աշխատակազմի աշխատակիցներ» գլխում շարադրված «Սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի» բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ.

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափը	հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձ
2.4	**Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ**				
-	**Երեխաների և սոցիալական պաշտպանության բաժին**				
1.	Բաժնի պետ	1	387,600		387,600
2.	Գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	2	289,000		578,000
3.	Գլխավոր մասնագետ-հոգեբան	1	289,000		289,000
4.	Առաջատար մասնագետ	1	282,200		282,200
-	Ընդ.	5			1,536,800

ե.1. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.4. կետում «Ամբողջը» տողի «68» և «20,209,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «69» և «20,515,600» թվերով.

զ. «Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարների աշխատակազմի աշխատակիցներ» գլխում շարադրված «Սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի» բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ.

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափը	հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձ
2.5	**Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ**				
-	**Երեխաների և սոցիալական պաշտպանության բաժին**				
1.	Բաժնի պետ	1	387,600		387,600
2.	Գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	3	289,000		867,000
3.	Գլխավոր մասնագետ-հոգեբան	1	289,000		289,000
4.	Առաջատար մասնագետ	1	282,200		282,200
5.	Առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
-	Ընդ.	7			2,097,800

զ.1. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.5. կետում «Ամբողջը» տողի «113» և «32,272,800» թվերը փոխարինել համապատասխանաբար «114» և «32,595,800» թվերով.

է. «Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարների աշխատակազմի աշխատակիցներ» գլխում շարադրված «Սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի» բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ.

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափը	հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձ
2.6	**Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ**				
-	**Երեխաների և սոցիալական պաշտպանության բաժին**				
1.	Բաժնի պետ	1	387,600		387,600
2.	Գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	5	289,000		1,445,000
3.	Գլխավոր մասնագետ-հոգեբան	1	289,000		289,000
4.	Առաջատար մասնագետ	1	282,200		282,200
5.	Առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
-	Ընդ.	9			2,675,800

է.1. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.6. կետում «Ամբողջը» տողի «185» և «52,451,800» թվերը փոխարինել համապատասխանաբար «186» և «52,747,600» թվերով.

ը. «Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարների աշխատակազմի աշխատակիցներ» գլխում շարադրված «Սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի» բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ.

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափը	հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձ
2.7	**Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ**				
-	**Երեխաների և սոցիալական պաշտպանության բաժին**				
1.	Բաժնի պետ	1	387,600		387,600
2.	Գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	4	289,000		1,156,000
3.	Գլխավոր մասնագետ-հոգեբան	1	289,000		289,000
4.	Առաջատար մասնագետ	1	282,200		282,200
5.	Առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
-	Ընդ.	8			2,386,800

ը.1. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.7. կետում «Ամբողջը» տողի «129» և «37,060,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «130» և «37,383,000» թվերով.

թ. «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարների աշխատակազմի աշխատակիցներ» գլխում շարադրված «Սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի» բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ.

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափը	հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձ
2.8	**Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ**				

-	**Երեխաների և սոցիալական պաշտպանության բաժին**				
1.	Բաժնի պետ	1	387,600		387,600
2.	Գլխավոր մասնգետ-սոցիալական աշխատող	3	289,000		867,000
3.	Գլխավոր մասնագետ-հոգեբան	1	289,000		289,000
4.	Առաջատար մասնագետ	1	282,200		282,200
5.	Առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
-	Ընդ.	7			2,097,800

թ.1. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.8. կետում «Ամբողջը» տողի «126» և «36,104,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «127» և «36,417,400» թվերով.

ժ. «Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարների աշխատակազմի աշխատակիցներ» գլխում շարադրված «Սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի» բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ.

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափը	հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձ
2.9	**Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ**				
-	**Երեխաների և սոցիալական պաշտպանության բաժին**				
1.	Բաժնի պետ	1	387,600		387,600
2.	Գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	1	289,000		289,000
3.	Գլխավոր մասնագետ-հոգեբան	1	289,000		289,000
4.	Առաջատար մասնագետ	1	282,200		282,200
-	Ընդ	4			1,247,800

ժ.1. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.9. կետում «Ամբողջը» տողի «52» և «15,708,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «54» և «16,279,200» թվերով.

ժա. «Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարների աշխատակազմի աշխատակիցներ» գլխում շարադրված «Սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի» բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ.

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափը	հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձ
2.10	**Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ**				
-	**Երեխաների և սոցիալական պաշտպանության բաժին**				
1.	Բաժնի պետ	1	387,600		387,600
2.	Գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	1	289,000		289,000
3.	Գլխավոր մասնագետ-հոգեբան	1	289,000		289,000
4.	Առաջատար մասնագետ	1	282,200		282,200
-	Ընդ	4			1,247,800

ժա.1. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.10. կետում «Ամբողջը» տողի «32» և «10,285,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «34» և «10,971,800» թվերով.

ժբ. «Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարների աշխատակազմի աշխատակիցներ» գլխում շարադրված «Սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի» բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ.

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափը	հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձ
2.11	**Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ**				
-	**Երեխաների և սոցիալական պաշտպանության բաժին**				
1.	Բաժնի պետ	1	387,600		387,600
2.	Գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	3	289,000		867,000
3.	Գլխավոր մասնագետ-հոգեբան	1	289,000		289,000
4.	Առաջատար մասնագետ	1	282,200		282,200
5.	Առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
-	Ընդ.	7			2,097,800

ժբ.1. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.11. կետում «Ամբողջը» տողի «124» և «35,305,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «126» և «35,890,400» թվերով.

ժգ. «Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարների աշխատակազմի աշխատակիցներ» գլխում շարադրված «Սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի» բաժինը լրացնել հետևյալ խմբագրությամբ.

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափը	հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձ
2.12	**Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ**				
-	**Երեխաների և սոցիալական պաշտպանության բաժին**				
1.	Բաժնի պետ	1	387,600		387,600
2.	Գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	3	289,000		867,000
3.	Գլխավոր մասնագետ-հոգեբան	1	289,000		289,000
4.	Առաջատար մասնագետ	1	282,200		282,200
5.	Առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
-	Ընդ.	7			2,097,800

ժգ.1. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.12. կետում «Ամբողջը» տողի «114» և «32,612,800» թվերը փոխարինել համապատասխանաբար «115» և «32,925,600» թվերով.

ժդ. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ վարչական շրջաններ» տողի «1285» և «370,307,600» թվերը համապատասխանաբար փոխարինել «1301» և «375,203,600» թվերով

ժե. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Ընդամենը՝ առանձնացված ստորաբաժանումներ» տողում «1324» և «382,874,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «1340» և «387,770,000» թվերով

ժզ. «Ամբողջը» տողում «2008.5» և «609,746,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «2024.5» և «614,642,600» թվերով»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության

տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

Երևանի քաղաքապետարանի պատվերով ձևավորված փորձագիտական թիմը, ՅՈՒՆԻՍԵՖ և Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունների աջակցությամբ, USAID «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի (CLASS) շրջանակներում, 2019թ. հուլիս-նոյեմբեր ամիսներին իրականացրել է Երևան քաղաքի սոցիալական պաշտպանության համակարգի վերաբերյալ հետազոտություն, որի արդյունքների հիման վրա ներկայացվել է Երևան համայնքի սոցիալական պաշտպանության նոր համակարգը /հետազոտության հղում՝ https://www.yerevan.am/uploads/media/default/0001/98/40e15f6f69955aa31ba57c165640b60848253540.pdf /:

Նոր համակարգի ներդրման առաջին փուլը սկսվել է 2020թ.-ին, որի արդյունքում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում լուծարվել է սոցիալական ապահովության վարչությունը, ինչպես նաև ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը և ստեղծվել է երեխաների և սոցիալական պաշտպանության վարչությունը, իսկ երկրորդ փուլով նախատեսվում է Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում իրականացնել փոփոխություններ՝ սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժինների փոխարեն ներդնելով երեխաների և սոցիալական պաշտպանության բաժիններ, որտեղ կներդրվեն նեղ մասնագիտական հաստիքներ, մասնավորապես՝ սոցիալական աշխատող (նախատեսվում է նաև բաժնի մեկ սոցիալական աշխատողը լինի

ԽՀՄ-ի քարտուղար) և հոգեբան (նախատեսվում է հոգեբանի անդամակցությունը ԽՀՀ-ին)՝ մասնագիտական աջակցությունը ԽՀՄ և ԽՀՀ-ին ապահովվելու նպատակով:

Կարևորելով «Տեղական ինքնակավարման մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի դրույթները՝ ինչպես նաև Երևան համայնքում արդյունավետ սոցիալական պաշտպանության համակարգի գործարկելը, անհրաժեշտ է իրականացնել բարեփոխումների վերջնական փուլը մասնավորապես՝ վարչական շրջաններում ներդնելով երեխաների և սոցիալական պաշտպանության բաժինները, որը կհանգեցի ըստ կարիքի սոցիալական աջակցության տրամադրմանը և սոցիալական նոր ծրագրերի արդյունավետ իրականացմանը:

Կարևոր է ընդգծել, որ միայն ամբողջական փոփոխություններն իրականացնելուց հետո կարող ենք ունենալ համապարփակ և արդյունավետ սոցիալական պաշտպանության համակարգ, քանի որ միայն առաջին փուլի իրականացումը թույլ չի տալիս համակարգի ամբողջական գործառնմանը և անհրաժեշտ է հնարավոր կարճ ժամկետներում փոփոխություններն իրականացնել նաև վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում:

Վերը նշված հետազոտության արդյունքները ներկայացվել են Երևանի քաղաքապետին, Երևան քաղաքի ավագանու մշակույթի, կրթության, և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովին, սոցիալական ոլորտի մասնագետներին և սոցիալական պաշտպանության համակարգի փոփոխությունների վերաբերյալ ստացել ենք դրական դիրքորոշումներ:

Ամբողջական համակարգը ներդնելուց առաջ հիմնավորումների փաթեթն ուղարկվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և երկու փուլերի վերաբերյալ ստացել ենք դրական դիրքորոշում /04.06.2020թ. 01/349162 գրությունը և 09.06.2020թ. N 15681-2020 գրություն/:

Հարկ ենք համարում նշել, որ վարչական շրջաններում նախատեսված փոփոխությունները նախատեսվում էր իրականացնել ավելի վաղ, սակայն ելնելով COVID-19-ով և պատերազմական դրությունով պայմանավորված երկրում ստեղված իրավիճակից, այն հետաձգվեց և իրագործելու համար 2021թ. USAID «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի /CLASS/ շրջանակներում վարչական շրջանների սոցիալական ոլորտի մասնագետների համար իրականացվեց «Սոցիալական աշխատանք»

մասնագիտության հատուկ ուսուցում դասընթաց, որի արդյունքում մասնակիցները ստացան սոցիալական աշխատողի հավաստագիր՝ հետագայում սոցիալական աշխատողի հաստիքով աշխատելու նպատակով:

Վերջին շրջանում առավել կարևորելով սոցիալական ոլորտի աշխատակիցների դերը՝ չնայած առկա է աշխատակիցների ավելի մեծ քանակի ավելացման անհրաժեշտություն՝ մեծ քանակով հաստիքների ավելացումը այս փուլում կարող է ֆինանասական բեռ լինել համայնքի համար, այդ իսկ պատճառով վարչական շրջաններում նախատեսվում է ավելացնել հնարավորինս օպտիմալ հաշվարկով (հաշվարկի տրամաբանությունը ներկայացված է ուսումնասիրության զեկույցում) կատարված հաստիքների ավելացում, իսկ նախկին հաստիքների պաշտոնի անձնագրերի պահանջը դարձնել սոցիալական ոլորտի նեղ մասնագիտական որակավորում ունենալը /հետազոտության արդյունքում վեր հանված առաջարկների, հիմնավորումների հիման վրա ձևավորվել է սոցիալական ոլորտի նեղ մասնագիտական գիտելիքներ ունեցող համայնքային ծառայողների անհրաժեշտությունը /սոցիալական աշխատող, հոգեբան/:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում նախատեսվում է ավելացում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ